ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Կարէն Մաթեւոսեան, Աւետ Աւետիսեան, Արա Զարեան, Քրիստին Լամուրէ, *Դադիվանք. Վերածնուած Հրաշք*, Երեւան, «Վիկտորիա» միջազգային բարեգործական հիմնադրամ, Տպարան «ՄՈԱ» ՍՊԸ, 2018, 224 էջ:

Միջնադարեան Հայաստանի մշակութային ժառանգութեան ամենամշուշոտ կողմը կոթողային գեղանկարչութիւնն է: Լաւ ծանօթ լինելով ճարտարապետութեանը, ձեռագիր նկարազարդ մատեաններին՝ մենք թերեւս միանգամից չենք կարողանում մտաբերել որմնանկարչութեան օրինակներ, է՛լ աւելի դժուարութեամբ ենք պատկերացրել դրանց առկայութիւնը հայկական շատ եկեղեցիներում: Պատճառները յայտնի են. որմնանկարները կա՛մ չեն պահպանուել, կամ էլ հասել են խիստ խաթարուած վիճակում:

Վերջին տարիներին շատ կարեւոր գործնական քայլեր են ձեռնարկւում միջնադարեան որմնանկարների (թէեւ շատ սահմանափակ ծաւալով եւ քանակով մեզ հասած) մաքրման եւ ամրակայման ուղղութեամբ: Այս վերականգնողական աշխատանքը իրականացւում է Իտալիայից ժամանած վերականգնողների կողմից՝ Արա Զարեանի գլխաւորութեամբ: 2015 բախտաւոր յուշարձանների շարքում ընդգրկուեց նաեւ Արցախի գոհարներից մէկը՝ Դադիվանքը, չնայած որ վերջինիս մրով պատուած որմնանկարների հետ առաջին ծանօթութիւնը 2014ին՝ մասնագէտներին մեծ յոյսեր չէր ներշնչել: Եւ ահա 2018ի գարնանը «Վիկտորիա» միջազգային բարեգործական հիմնադրամի ջանքերով լոյս տեսաւ *Դադիվանք. Վերածնուած Հրաշալիք* եռալեզու (հայերէն, ռուսերէն, անգլերէն) գիրքը՝ նուիրուած վանքի որմնանկարներին:

Չափազանցրած չենք լինի, եթէ ասենք, որ գրքի հրատարակումը իրադարձութիւն է ազգային մշակութային ժառանգութեան վերագնահատման եւ վերաճանաչման իմաստով: Չէ՞ որ Արցախ աշխարհի կոթողային գեղանկարչութեան միակ օրինակը մինչ այժմ մնում էր կա՛մ անտեսանելի (ծածկուած էր մրի շերտով), կա՛մ անհասկանալի, (պահպանուած դրուագները ստանում էին թերի մեկնաբանութիւն): Վերականգնողական աշխատանքները ոչ միայն նոր կեանք հաղորդեցին որմնանկարներին, այլեւ հնարաւորութիւն տուեցին գնահատելու դրանց գեղարուեստական առանձնայատկութիւններն ու յստակեցնելու պատկերագրական մանրամասները: Այսպէս օրինակ՝ հերքուեց պատուիրատու իշխանուհի Արզու Խաթունի պատկերման ենթադրութիւնը, բայց ի յայտ եկաւ Քրիստոսի ձեռքի մէջ պահուող սրուակի առկայութիւնը: Դադիվանքի Կաթողիկէի որմնանկարները

եզակի են իրենց պատկերագրութեամբ, քանի որ ներկայացնում են Ս. Ստեփանոս Նախավկայի նահատակութիւնը (հիւսիսային պատ) եւ Ս. Նիկողայոս Սքանչելագործի հայրապետական իշխանութիւն ստանալու դրուագը (հարաւային պատ): Միեւնոյն ժամանակ նրանց գեղարուեստական ոճի եւ կերպարների տիպաբանական առանձնայատկութիւնները կասկած չեն առաջացնում հայ վարպետ(ներ)ի աշխատանքի մասին: Կարեւոր բացայայտում էր որմնանկարների ստեղծման տարեթիւը՝ 1297:

Դադիվանքին նուիրուած սոյն գրքի ստեղծման շարժառիթն անշուշտ վերածնուած որմնանկարներն են, որոնց նուիրուած է լուսանկարների հարուստ շարքը՝ զետեղուած ինչպէս գրութեան ներսում, այնպէս էլ տրուած առանձին պրակով: Որմնանկարների մաքրման եւ ամրակայման աշխատանքների ընթացքի մասին պատմում են վերականգնող ճարտարապետ, դոկտ. Արա Զարեանն ու որմնանկարների վերականգնող մասնագէտ դոկտ. Քրիստին Լամուրէն:

Գրքի երկու միւս բաժինները նուիրուած են վանքի պատմութեանը՝ շինութիւններին, յարդարանքին եւ արձանագրութիւններին, որոնց հեղինակն է պրոֆեսոր Կարէն Մաթեւոսեանը, իսկ որմնանկարների նկարագրութիւնն ու թեմաների պատկերագրական որոշ մանրամասների անդրադարձը կատարել է արուեստաբան Աւետ Աւետիսեանը: Այստեղ ի մի են բերուած Դադիվանքի եւ նրա որմնանկարների մասին աղբիւրներում եւ մասնագիտական գրականութեան մէջ առկայ տեղեկութիւններն ու անդրադարձները, այդ թւում Դադի կամ Դադէի մասին աւանդոյթը՝ վանքի հիմնադրման կապակցութեամբ: Քննուող խնդիրների շարքում հեղինակները յատկապէս առանձնացրել են Ս. Նիկողայոսի եզակի նիւթը եւ նրա ի յայտ գալու հնարաւոր դրդապատճառները, անդրադարձել են հայկական մանրանկարչութեան եւ սրբանկարչութեան մէջ Սքանչելագործի պատկերման օրինակներին, որոնք հիմնականում ուշ միջնադարեան են:

Խօսելով գրքի բնոյթի մասին՝ կարծում ենք, որ այն պէտք է անուանել նկարա-գիրք, քանի որ վերջինս մենագրական բնոյթի աշխատութիւն չէ, եւ ըստ էութեան նման խնդիր չէր էլ դրուած հեղինակների առջեւ: Հիմնական նպատակն է եղել տալ յուշարձանի պատմամշակութային բնութագիրը, որի ենթախորքով էլ կը ներկայացուէին նոր կեանք ստացած որմնանկարների դրուագները: Միեւնոյն ժամանակ գրքի այսպիսի բնոյթ շատ նպաստաւոր է վեր հանելու գիտական այն խնդիրները, որոնք կը դրուեն Դադիվանքի որմնանկարներին նուիրուած ապագայ քննավերլուծական ուսումնասիրութեան հիմքում, որը, յուսով ենք, շատ չի ուշանայ: Այս հետաքրքիր յուշարձանը գիտական շրջանառութեան մէջ դնելու կարեւոր նախապայմաններից է որմնանկարների բազմակողմանի գեղարուեստական ու ոճական

քննութիւնը արեւելաքրիստոնէական, ինչպէս նաեւ հայկական ԺԳ. դարի որմնանկարների համնապատկերում, քանզի գոնէ նշուած դարաշրջանից - անկախ նրանց դաւանաբանական պատկանելութիւնից - մեզ են հասել ազգային կոթողային գեղանկարչութեան մի խումբ յուշարձաններ, որոնք հնարաւոր չէ առանձնացնել հայկական ազգային մշակութային միջավայրից:

Յուսանք, որ հայկական կոթողային գեղանկարչութեան այն պատառիկները, որոնք - ինչպէս եւ Դադիվանքի որմնանկարները - վերաբացուել են վերականգնման արդիւնքում, մշակութասէր հանրութեանը կը ներկայացուեն նմանատիպ հրատարակութեամբ եւ լաւ սկիզբ կը հանդիսանան արուեստի այս ճիւղի յետագայ՝ աւելի բազմակողմանի ուսումնասիրութիւնների համար:

ԶԱՐՈՒՀԻ ՅԱԿՈԲԵԱՆ
zaruhy@yandex.ru